

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### Մասնակցություն միջոցառումներին

- ✓ 2018թ. հունվարի 15-16-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած Միգրացիայի վիճակագրությանը նվիրված միջազգային համաժողովին և «Միգրացիայի տվյալների բարելավումը քաղաքականության համար. Տվյալների արդիականացում, կարողությունների զարգացում ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում» խորագրով նիստին,
- ✓ 2018թ. հունվարի 15-18-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ք. Մինսկում (Բելառուս) կայացած «Բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգը և Կայուն զարգացման նպատակների ցուցանիշները» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2018թ. հունվարի 17-18-ը ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ջանլաթյանը և առաջատար մասնագետ Լ. Բեյբությանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Վճարային հաշվեկշիռ. ներածական դասընթաց» թեմայով ուսումնական այցելությանը,
- ✓ 2018թ. հունվարի 24-26-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Տվյալների հավաքագրման էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառումը մարդահամարների և կացարանների հաշվառման գործընթացում» խորագրով աշխատաժողովին,
- ✓ 2018թ. հունվարի 29-ից փետրվարի 9-ը ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ավագ վիճակագիր Ա. Մարտիրոսյանը մասնակցել է ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Վճարային հաշվեկշռի վիճակագրության կազմումը» թեմայով դասընթացին,
- ✓ 2018թ. փետրվարի 14-15-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը մասնակցել է ք. Հելսինկիում (Ֆինլանդիա) կայացած Եվրոպական

վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի հանդիպմանը, որպես Բյուրոյի փոխնախագահ,

- ✓ 2018թ փետրվարի 21-22-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած «Բնապահպանական-տնտեսական հաշիվների համակարգի ներդրում» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2018թ. փետրվարի 26-28-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Տուրինում (Իտալիա) կայացած Կայուն զարգացման նպատակների 5.ա.1 և 5.ա.2 ցուցանիշների վերաբերյալ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության վերապատրաստման սեմինարին:

## Առաքելություններ

- ✓ 2018թ. հունվարի 29-ից փետրվարի 9-ը ՀՀ ԱՎԾ-ում էր Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետ Մարիա Մանչևան Տարածաշրջանային ՀՆԱ-ի, ՀՆԱ-ում փոքր և միջին բիզնեսի մասնաբաժնի, ՖՄԱԶԾ գնահատման և 2008թ. ՀՆԱ-ի ժամանակային շարքերի վերաբերյալ քննարկումներ իրականացնելու նպատակով,
- ✓ 2018թ. հունվարի 30-ից փետրվարի 2-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Լիտվայի վիճակագրության ծառայության ազգային հաշիվների բաժնի պետ Գաիլուտե Ջասկիենեն և նույն բաժնի պետի տեղակալ Ջուրատե Սինկունիենեն «Աջակցություն Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը» ծրագրի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,
- ✓ 2018թ. հունվարի 30-ից փետրվարի 2-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Դանիայի վիճակագրության ծառայության բիզնես դինամիկայի բաժնի ավագ խորհրդատու Յեսպեր Մոլթրափ-Նիլսենը և նույն բաժնի հատվածի ղեկավար Քրիստինա Յուլ Էգեդեսոն «Աջակցություն Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը» ծրագրի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով,

- ✓ 2018թ. փետրվարի 27-ից մարտի 2-ը ՀՀ ԱՎԾ-ում էին Լիտվայի վիճակագրության ծառայության ձեռնարկությունների վիճակագրության բաժնի պետ Անտոնինա Վալիուլիենեն և նույն բաժնի գլխավոր մասնագետ Ռենատա Տումենիենեն «Աջակցություն Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը» ծրագրի շրջանակում խորհրդատվական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

## Տեղային սեմինարներ

- ✓ 2018թ. հունվարի 15-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Լ. Մարկոսյանը և պարենային ապահովության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Անտոնյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Հայաստանի պարենային ապահովության և սնուցման ազգային ռազմավարական գնահատման մեկնարկին,
- ✓ 2018թ. հունվարի 17-19-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած Երեխաների խնամքի և պաշտպանության համակարգի բարեփոխումների գնահատման գործընթացի վերաբերյալ աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2018թ. հունվարի 23-ին ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Առանձին ապրանքատեսակների գների բարձրացման պատճառները և գնաճը մեղմելու հնարավորությունները» խորագրով խորհրդարանական լսումներին,
- ✓ 2018թ. հունվարի 25-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Թոխայանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի Հանրապետությունում երեխայի սեռի խտրական ընտրության և պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընտհատումների կանխարգելման 2018-2021թթ. գործողությունների ազգային միջնաժամկետ ծրագրի մշակման խնդիրները» թեմայով աշխատանքային քննարկմանը,
- ✓ 2018թ. հունվարի 29-ից մարտի 26-ը ՀՀ ԱՎԾ միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Նալբանդյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «2030թ. Օրակարգի իրականացման և վերանայման համար շահագրգիռ

կողմերի ներգրավվածության ամրապնդում» խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2018թ. հունվարի 30-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Երիտասարդության հարցերին նվիրված 2018թ. «Մարդկային զարգացման ազգային զեկույց»-ի քննարկմանը,
- ✓ 2018թ. փետրվարի 22-23-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը և նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են գ. Շահումյանում կայացած «Մոնիթորինգի միջոլորտային խմբի» տեղեկատվական-ուսուցողական սեմինարին,
- ✓ 2018թ. փետրվարի 26-ին ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը մասնակցել են ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև ԵԱՏՄ-ն ամրամակցելու շրջանակներում ՀՀ-ը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի իրագործման նպատակով ՀՀ վարչապետի 2015թ. հունիսի 30-ի «Աշխատանքային խումբ ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 559-Ա որոշմամբ ստեղծված հատուկ աշխատանքային խմբի հերթական նիստին,
- ✓ 2018թ. փետրվարի 26-ից մարտի 2-ը ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, նույն բաժնի առաջատար մասնագետ Ն. Մանդալյանը, առաջին կարգի մասնագետներ Ա. Համբարձումյանը և Հ. Սիմոնյանը մասնակցել են ք. Երևանում կայացած Գործնական դասընթաց ի շարունակություն Եվրոպական հարևանության գործիքի Բնապահպանական տեղեկատվական միասնական համակարգ II նախագծի ներքո ջրերի վերաբերյալ սեմինարին: